01/10.1/4651-10
2010-04-27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Ներկայացված նախագծով սահմանվում է, որ «Կուսակցության ընտրական ցուցակներով ընտրված, բացառությամբ ցուցակի առաջին երեք համարների, թեկնածուների հասանելիք մանդատները տրվում են առնվազն մեկ տարի ժամկետով պարտադիր պատգամավորական գործունեությամբ զբաղվելու համար։»։

Հայտնում ենք, որ՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով և Ազգային ժողովի պատգամավորն ընտրվում է այդ ժամանակահատվածի համար։ Այդ առումով նախագիծը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի պահանջից։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Ազգային ժողովն արձակվելու և Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ նշված այլ դեպքերում: Այդ առումով օրենքով չեն կարող նախատեսվել պատգամավորների լիազորությունների դադարեցման այլ հիմքեր:

3. Նախագիծը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ գլխի պահանջներից, քանի որ բոլոր պատգամավորներին մանդատները տրվում են հավասար հիմունքներով, առանց բացառությունների և առանց ժամկետների սահմանափակման: Ուստի նախագծի պահանջը՝ որոշ պատգամավորների առանձնացնել, մանդատները տալ առնվազն մեկ տարի ժամկետով «պարտադիր պատգամավորական գործունեությամբ» զբաղվելու համար հակասահմանադրական և անընդունելի է:

4. Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի պահանջի: «Պարտադիր պատգամավորական գործունեությամբ զբաղվելու» պահանջը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի պահանջներից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատգամավորական գործունեությունը չի կարող մի քանի տեսակ լինել, այն հստակ սահմանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և պարտադիր է բոլոր պատգամավորների համար:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

Ընտրված պատգամավորի պատգամավորական լիազորությունների ինքնակամ ստանձնումը կամ վաղաժամկետ դադարեցումն իր անձնական իրավունքն է:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և դեմ է դրա ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-855-24.03.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 5-ի ընտրական օրենսգրքի 115-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.1-ով.

«6.1 Կուսակցության ընտրական ցուցակներով ընտրված, բացառությամբ ցուցակի առաջին երեք համարների, թեկնածուների հասանելիք մանդատները տրվում են առնվազն մեկ տարի ժամկետով պարտադիր պատգամավորական գործունեությամբ զբաղվելու համար։ե։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Ներկայացուցիչների պալատի ինստիտուտի բացակայության պայմաններում կապահովի բոլոր տարածաշրջանների ներկայացուցչությունը խորհրդարանում։